

է դալիս սոյն այս դադի ներս շնչուելովը: Այդ հոտը միշտ այն ժամանակն է լինում, երբ անուշիկ շատ յամբ կերպով է այրվում, կամ երբ բոլորովին չէ այրուած դեռ ևս, սկսում են փակել վառարանի խողովակը: Այս վերջին դիպուածում անուշիկ թափվում է սենեակի մէջ: Այն կապտագոյն բոցը, որ նկատվում է փայտի դանդաղութեամբ այրուելիս, կամ կրակի շեղջի մէջ, դա անուշիկի օքսիդի բոցն է: Գորա համար վառարանը միայն այն ժամանակ կարելի է փակել, երբոր կրակի մէջ էլ կապոյտ բոց չերևայ:

Թթուածնի ուրիշ մարմնոց հետ քիմիական միաւորուելը ասվում է օգտագոյն-է կամ ինքն-օգոյն: Մենք տեսանք որ թթուածինը որ միաւորվում է ուրիշ մարմնոց հետ՝ կազմվում են օգտագոյնի կամ թթվուկներ, այս ինքն թթուածինը թթուացնում է այդ մարմինները: Երբոր մարմինը միաւորվում է թթուածնի քիչ քանակութեան հետ, այդ ժամանակ օքսիդ է ասվում, երբ թթուածնի քանակութիւնը շատ է լինում, այդ ժամանակ կազմվում է թթու կամ թրթվուկ: Մենք տեսանք նոյնպէս որ մարմիններն թթուացումը յառաջ է գալիս բարձր բարեխառնութեան ժամանակ, բայց չը պէտք է կարծել, որ միշտ այդպէս է լինում: Վեր առնենք մի երկաթի կտոր և դնենք խոնաւ տեղ, մի առ ժամանակից յետոյ երկաթը արտաքուստ կը փոխուի և կը ծածկուի կարմրավուն կեղևով, որ կարելի է դանակով քերել: Այս դիպուածում երկաթը հասարակ բարեխառնութեան մէջ օդի թթուածնի ազդեցու-

թեամբ թթուացել է, այս ինքն միաւորուել է նորա հետ և բաղադրել երկաթի օքսիդ, դա էլ միաւորուելով օդի մէջ եղած ջրային շագինների հետ, բաղադրել է երկաթի ջրային օգտագոյն, կամ այն՝ որ հասարակ խօսքով ասվում է Ժանգ: Այս տեղ թթուացումը շատ յամբ կերպով է յառաջ գալիս: Երկաթի օքսիդը, որ տաքացուեցաւ երկաթի թթուածնի մէջ այրուելուց՝ անջուր օքսիդ է, որ խոնաւ տեղերում փոխարկվում է ջրային օքսիդի կամ ժանգի: Եւ այդ երբ որ թթուացումը յառաջ է գալիս արագութեամբ, այդ ժամանակ բարեխառնութիւնը բարձրանում է և մարմինը լոյս է արձակում: Այդ դիպուածում մարմնոց մէջ այրումն է յառաջ գալիս, ուրեմն այրումը մարմնի արագութեամբ թթուացումն է: Յամբ կերպով այրելիս և փթելիս յառաջ է գալիս և յամբ կերպով այրումն կամ թթուացումն:

(Մտնել է յետ-էջը)

ՂԱԶԱՐ ԱՂԱՅԵԱՆՅ

ԱԶԳԱՅԻՆ

ՄԱՐԲԵԼԵ ԵՒ ԽՈՐԷՆ ՎԱՐԳԱՊԵՏԷ

Երթ. Մամբրէ Ծ. Վարդապետ Մամիկոնեանց՝ Եռաջնորդ Բաղիշոյ, և Երթ. Խորէն Ծ. Վարդապետ Ելզգեանց՝ Հայր Ս. Ե. Կուսի Վանացն Երմաշուի 1-ն ամսոյս (ի Պօլսոյ) եկին ի Մայր Եթուսի Ս. Լջմիածին:

Յիշեալ երկու Բարեշնորհ Վարդապետք ոչ միայն զիտնական, այլ և ընտիր

